Ազգը այս վառվռուն երիտասարդութեան հաւատալով իր Լսարանի յարատեւութիւնը՝ իր նիստերու շարունակութեան համար մաղթանք ընելով առ այժմ կբաւականանայ։

Հուսկ յետոյ հանդիսականներն իրենց մասնաւոր նուէրներն ձգել սկսան Լսարանին ի նպաստ՝ սնդուկի մ՝ մէջը։

Այս նուիրատու անձանց մէջ կրեկլի հանդիսացաւ Պ. Մկրտիչ Ս. Աստուածատուրեան, որ երկու օր յառաջ 20 հատոր գիրք Թանգարանին ընծայելէն յետոյ՝ այս երեկոյ ալ քնագիտութեան մի քանի գործիքներ խոստացաւ գնել և նուիրել Թանգարանին։

Առ այս ազնիւ և ուսումնասէր երիտասարդն ազգին կողմանէ յայտնելով մեր շնորհակալութիւնը կը կարեմ խօսքիս թելը, իւրաքանչիւր ուրուք համակեալ այս երեկոյ ազգային վերանորոգութեան յուսով տուներին դառնալն տեսնելով։ (Սեպտ. 2.)։

ԽՈՐԷՆ Ս. ԱՐԾՐՈՒՆԻ։

ՆԱՄԱԿ ՏՓԽԻՍԻՑ.

Լոմբարդս-Ռիեան «Արարատ» ամսագրէ.

Ինչպէս տպագրուած էր արդէն, ներկայ տարւոյ «Արարատի» Թերթերի մէջ՝ իմ բժշկական նոր գիւտերի վերաբերութեամբ ունիմ պատիւ յարգոյաբար յայտնել. որ նոյն գիւտերից մինը՝ այսինքն, առողջապահական երկարակեցութեան դեղն՝ 8, և 9-ն ամենայս՝ հանդերձ տեղեկագրութեամբ՝ ընդ համարօք 1065, և 458. (տեղական փոստայով) ուղարկեցի Ս. Պետերբուրգի Կայսերական բժշկական Ակադէմիայն ի քննութիւն. և երկրորդապէս՝ իրաւունք տալու ինձ նոյն դեղի վաճառման մասին. խոստանալով նորան, այսինքն Ակադէմիային, որ նոյն դեղի գործադրութեան իրաւունքն ստանալէս յետոյ՝ մաշարայական, այն է՝ թոքախտական ցաւի, և ուրիշ մի քանի կանացի դժուարաբուժ հիւանդութիւնների մասին դտած դեղերուս համար էլ՝ անձամբ կը ներկայանամ. (ակադէմիային,) գործնական կերպով ցոյց տալու, և ստուգելու այն ամենը՝ ինչ որ նոցա բուն և էական յատկանիշներն են, Վերոյիշեալ առողջապահական գիւտին մի յատկութիւնն ևս այս է՝ որ թոքախտութիւնը (չիխոտական) եթէ առաջին, կամ երկրորդ աստիճանին էլ հասած լինի, կբժշկէ. և միանգամայն առողջ մարդին էլ՝ ազատ է պահում նոյն սխտից։ Այս դեղը (էլիքսերը) գործածողը, որ բաղկացած է հեղուկից և հատագեղից, (բիլուլից) չպիտի տարակուսի, որ մինչև 160 տարի՝ զուարթ և առողջ կեանք կունենայ. ինչպէս հին ժամանակումը . . . . . և ուրիշ դեղերու էլ՝ չի կարօտեր. որը կարող են գործ ածել մշտապէս, թէ առողջ, և թէ հիւանդ մարդիկ, ինչ հասակի մէջ էլ որ լինին, և ինչ կերպ ցաւ էլ որ ունենան. որովհեան, հիւանդ մարդուն առողջացնում է. և առողջին էլ՝ ազատ է պահում ամեն տե-

սակ հիւանդութիւններից. որի մանրամասն բացատրութիւնը իրա ժամանակին կը հաղորդեմ »։

Այս առարկայի վերաբերութեամբ՝ ճշմարիտը պէտք է խոստովանել, որ իմ կեանքս, զոհողութիւնս, և կրած նեղութիւններս՝ շատ պակաս չէին՝ հին և նոր դիւտերու հեղինակների մի քանիսների կեանքից և կրածներից. որի իրագործման համար՝ տասը տարիից աւելի է որ աշխատում էի անխոնջ տքնութեամբ, և փորձառական բազմադիմի քննութիւններով։ Այս դեղը պիտի վաճառուի Տփխիսում՝ Սաբօրնի ուլիցայում, վայենի Գեմնազիային դէմը՝ պ. Ցարութիւնովի տանը № 12. Համազասպ Վարդանեանցի մոտ. իսկ Ախալցխայում՝ պ. Գրիգոր ճէպէեանցի կրպակում։ Ցանկացողք կարող են դիմել նաև Հեղինակիս, Ցիրաւի, թէ ինձ, և թէ շատերին ցանկալի կլինէր, որ այս մարդկային ամբողջ ազգի փրկութեան գործը՝ անտես չլինէր՝ . . . . միմիայն յուսով ապրեցնելով, այլ շուտով իրագործուէր. որը՝ աշխարհին ընծայելու համար՝ յօժարակամ հոգւով յանձն առած եմ արդէն՝ ամէն մի դժուարութիւնների, կոյր ատելութեան և շար նախանձի լարած թակարթների և ալիքների մէջ ևս՝ ինքս զինքս երջանիկ համարելով՝ չթողնել ձեռքից իմ ուղղութիւնը իմ մարքին ու կամքին դեկը, այլ աւելի ևս ուժով՝ գործել և յառաջել։

Եղիշէ Մէճարոնեանց.

* *
*

Ախալքալակայ նահանգի Ապուլ գիւղի բարեկրօն Զաքարիայ քահանայն և իւր բարեպաշտուհի կողակիցը իւրեանց հոգեսիրութիւնից ստիպեալ յատուկ խնդրագրով առ Վեհափառ Հայրապետն Ազգիս իւրեանց արդար վաստակից նուիրեցին յօգուտ Մայր Աթոռոյս հազար (1000) ռուբլի՝ խնդրելով որ այդ գումարը մշանջենաւորապէս ճեայ Մայր Աթոռոյս գանձարանում, իսկ նորա տոկոսիքը տարեցտարի բաժանուի սորա միաբաններին իբրև ժամեցաղրամ, որպէս զի իւրաքանչիւր տարին հոգեհանգիստ կատարուի և Ս. պատարագ մատուցուի Էջմիածնի Ս. Տաճարի մէջ իւրեանց և իւրեանց համայն ննջեցելոց և կենդանեաց հոգւոց յիշատակի համար։

Ազգիս Վեհափառը Հայրապետ ընդունելով իւր այս հոգեսէր զաւակաց աստուածահաճոյ նուէրը՝ Հայրապետական օրհնութեամբ օրհնեց նուիրատուաց գովանի ջերմեռանդութիւնը և անմիջապէս յանձնեց Սինոդին կարգադրել, ինչ որ արժան է բարեպաշտ նուիրատուաց ցանկութեան համաձայն։

Ո՞ր էր, եթէ մեր Ազգայիններից ամէն մի կարող անձինք այս նուիրատուաց բարի օրինակին հետևելով՝ անմահ անուն ժառանգելու փափագն ունենային Ազգիս ներկայ և ապագայ սերունդների մէջ՝ իւրեանց արդար վաստակից մի փոքր բաժին հանելով կամ եկեղեցեաց պայծառութեան կամ Մայր Աթոռոյս ճեմարանի և երկսեռ ազգային դպրոցաց

յառաջադիմութեան և կամ այլ ասուածահաճոյ ազգային հասատութեանց ապահովութեան համար։ որոնցից միմիայն պէտք է յառաջանայ անշուշտ Ազգիս հոգեկան և մարմնական երջանկութիւնը։

* * *

Նողայսք քաղաքի բարեկր. Ղաղտր քահանայն խնդրում է «Արարատի» միջոցաւ յայտնել նոյն քաղաքի հայ հասարակութեան լիարեան շնորհակալութիւնը Մոսկուայարքնակ վսեմ. և Ազգասէր Յովհաննու Յովնանեանց, որ ազգասիրական կարեկցութեամբ Նողայսք քաղաքի հայկական Եկեղեցւոյն նուիրել է հասարակ քարերով զարդարուած մի պատուական Սաղաւարդ, մի վայելուչ վակաս և մի զօտի ի յիշատակ հոգւոց իւր բարեպաշտուհի Մարիամ ամուսնոյ և որդւոցն Ստեփաննոսի և Յովհաննու։

Նոյնպէս և Նողայսք քաղաքի բնակչուհի այրի Աննայի Գէորգեան Քէշիշեանց, որ իւր եկեղեցասիրական ջերմեռանդութեամբ նուիրել է նոյն քաղաքի եկեղեցւոյն մի հատ եօթնաջահեան աշտանակ ի յիշատակ հոգւոյ իւր հանգուցեալ ամուսնոյ հին—Խրիմեցի Մանուկի Քէշիշեանց։ Օրհնեա՜լ լինին։

* * *

Ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ Մայր Աթոռոյս Գէորգեան ճեմարանի լսարաններում դասախօսելի առարկայից կարգը մուցնել և Բ-Ի-Ն-Ա-Ն-Ա-Գ-Ի-Ն գրքոյն։ Ի նկատի ունենալով, որ Գէորգեան ճեմարանի նպատակն է առաւելապէս պատրաստել Հայ ազգի համար աբժանաւոր ուսուցիչներ և եկեղեցականներ, հասկանալի է թէ՝ ոքքան օգտակար և նպատակայարմար է մեր Ազգախնամ Հայրապետի այս կարգադրութիւնը։

* * *

Հոկտ. 11ին Կ. Պօլսեցի մեծ. Գարրիէլ էֆէնտին Նորատունկեան այցելելով Մայր Աթոռոյս Գէորգեան ճեմարանին նուիրեց յօգուտ Նորա հինգ հատ օսմանեան լիրա ոսկի, որի մասին յայտնում ենք խորին շնորհակալութիւն։

* * *

Ազգիս Վեհափառ Հայրապետը տարուոյս Յուլիսի 4ից մինչեւ հոկտեմբերի 14 բարեհաճեց տալ հետեւեալ կոնդակները։

Կոնդակ Հին—Նախիջեւանու երկսեռ հայ դպրոցաց նորընտիր հոգաբարձուաց անունով, որով հաստատուում է հոգաբարձութեան պաշտօնի մէջ բարեկ. Մկրտիչ քահանայն Տ. Սարգսեան, պ. պ. Արզարն Օրբելեան, Արտիմ - բէկն Սարուխանբէկեանց, Բաղալ Մելիք - Էյնաթեանց, Աղէքսանդր Տ. Գասպարեան եւ Կոստանդին Օհանեանց, տալով նոցա օգնական պ. Պ. Աբրահամն Ց. Յակովբեանց, Սարգիս Տ. Մկրտչեան եւ Յովհաննէսն Աւետիքեանց։ Յուլիս 1. Թ. 313։